ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 2

«ԶԱՕԿ-ՇՀԾԶԲ-16/6» ծածկագրով
շրջանակային ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

Ք. Երևան օդ/ն «Զվարթնոց» - 2 12.04.2016թ. ժամը 11:00

Մասնակցում են՝

Հանձնաժողովի նախագահ՝ Մարտիրոսյան Ն.

Հանձնաժողովի անդամներ՝ Թադևոսյան Ա. և Գալստյան Տ.

Հանձնաժողովի քարտուղար՝ Պետրոսյան Գ.

1. ***Մարտիրոսյան Ն.*** «ԶԱՕԿ-ՇՀԾԶԲ-16/6» ծածկագրով մրցույթի գնային առաջարկների ներկայացման, գնահատման արդյունքների հաստատման մասին նիստը հայտարարում եմ բացված: Ընդունել ի գիտություն, որ գնման առարկայի նախահաշվային գինը կազմում է 1890000 ՀՀ դրամ:

1.1 «ԶԱՕԿ-ՇՀԾԶԲ-16/6» ծածկագրով մրցույթի շրջանակներում carayutyun-15-3@shh.gnumner.am էլեկտրոնային հասցեով հայտ է ուղարկվել «ԳԱԿ-ՇՀԾԶԲ-15/3» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի հետ շրջանակային համաձայնագրեր կնքած բոլոր մասնակիցներին, միաժամանակ հայտարարությունը տեղադրվել է http://gnumner.am/download/169153.html հասցեում:

1.2 Սահմանված կարգով գնային առաջարկներ են ներկայացրել հետևյալ մասնակիցները՝

Մասնակցի անվանումը	Գտնվելու վայրը
«Նիգ-Ապարան» ՍՊԸ	ք. Երևան, Ծովակալ Իսակովի 30/1 հեռ: 094 00-06-10

1.3 Գնային առաջարկներ չներկայացրած մասնակիցները:
Գնային առաջարկներ չեն ներկայացրել «ԳԱԿ-ՇՀԾԶԲ-15/3» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի հետ շրջանակային համաձայնագրեր կնքած մնացած մասնակիցները:

1.4 Հայտերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել:

2. Տվյալներ ծրարները կազմելու և ներկայացնելու՝ սահմանված կարգի պահանջների համապատասխանության մասին:

«Նիգ-Ապարան» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ծրարը կազմված է հրավերով սահմանված պահանջներին համապատասխան:

2.1 Տվյալներ բացված յուրաքանչյուր առաջարկում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին:
«ԶԱՕԿ-ՇՀԾԶԲ-16/6» ծածկագրով մրցույթի գնային առաջարկների ներկայացման պահանջների համաձայն «Նիգ-Ապարան» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ծրարում առկա են հրավերով սահմանված փաստաթղթերը: Բոլոր ներկայացված փաստաթղթերը կազմվել են բնօրինակից և 2 օրինակ պատճեններից, բնօրինակ փաթեթում ներառված բոլոր պատճեն հանդիսացող փաստաթղթերի բոլոր էջերը կնքված և ստորագրված են Մասնակցի կողմից:

2.2 Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.
«Նիգ-Ապարան» ՍՊԸ-ի կողմից մրցույթի գնային առաջարկների ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:

2.3 Հանձնաժողովը որոշեց՝ «Նիգ-Ապարան» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատել բավարար և հայտարարել որպես առաջին տեղը զբաղեցրած մասնակից:

2.4 «Նիգ-Ապարան» ՍՊԸ-ին որպես առաջին տեղը զբաղեցրած մասնակից ծանուցել սույն արձանագրությունը ուղարկելու միջոցով՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող, սույն ընթացակարգի հրավերի 2-րդ մասի հայտ պատրաստելու հրահանգի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը:

Կողմ՝ 3, դեմ՝ 0

3. Մասնակիցների առաջարկած գինը՝

Հ/Հ	Ծառայության անվանումը	Քանակը հատ	Գնի առաջարկ ՀՀ դրամ «Նիգ-Ապարան» ՍՊԸ Գինը
1	Գազ 31105 մակնիշի 2004թ. արտադրության ավտոմեքենայի համար նախատեսված SU-2 և SU-1 ծառայություններ և այդ ընթացքում օգտագործվող պահեստամասեր, քսայուղեր և այլ օժանդակ նյութեր	1	1584000
2	Վազ 21063 մակնիշի 1988թ. արտադրության ավտոմեքենայի համար նախատեսված SU-2 և SU-1 ծառայություններ և այդ ընթացքում օգտագործվող պահեստամասեր, քսայուղեր և այլ օժանդակ նյութեր	1	1442000
3	Շեվրոլե Նիվա մակնիշի 2008թ. արտադրության, 4x4 տիպի, ավտոմեքենայի համար նախատեսված SU-2 և SU-1 ծառայություններ և այդ ընթացքում օգտագործվող պահեստամասեր, քսայուղեր և այլ օժանդակ նյութեր	1	1727000
4	Ֆոլցվագեն Պասսատ մակնիշի 2007թ. արտադրության ավտոմեքենայի համար նախատեսված SU-2 և SU-1 ծառայություններ և այդ ընթացքում օգտագործվող պահեստամասեր, քսայուղեր և այլ օժանդակ նյութեր	1	4219000

3.1 «Նիգ-Ապարան» ՍՊԸ-ի կողմից մրցույթի գնային առաջարկների ինքնարժեքի հաշվարկներում թվաբանական անճշտություններ չկան:

4. Հանձնաժողովը որոշեց՝

4.1 Որպես առաջին տեղ զբաղեցրած մասնակից «Նիգ-Ապարան» ՍՊԸ-ի մասով ներկայացնել հարցում ՀՀ ֆինանսների նախարարություն ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև հրավերով սահմանված «Ֆինանսական միջոցներ» որակավորման պահանջի առկայության վերաբերյալ:

Կողմ 3՝ դեմ 0

5. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման վայրը. օրը և ժամը:

5.1 «ՁԱՕԿ-ՇՀԾՁԲ-16/6» ծածկագրով մրցույթի հայտերի գնահատման արդյունքները ամփոփելու համար գնահատող հանձնաժողովի նիստ հրավիրել ՀՀ ՖՆ կողմից համապատասխան եզրակացությունը ստանալու հաջորդ օրը ժամը 11:00-ին ք. Երևան օդ/ն «Զվարթնոց» - 2 հասցեում:

6. Նիստին ներկա գտնվող հանձնաժողովի անդամների անուններն ու ազգանունները:

Նախագահ՝ _____ Մարտիրոսյան Ն.

Անդամներ՝ _____ Թադևոսյան Ա.

_____ Գալստյան Տ.

Քարտուղար՝ _____ Պետրոսյան Գ.